

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

Կիրակի օր, ապրիլի 30-ին, Կոնստանդնուպոլիսի փողոցի վրա գտնվող Փամպուկեանց
եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարվի ՐԱՅՖԻԻ հոգեհանգիստը,
հանգուցեալի մահվան տարեդարձի առիթով:
Սկիզբն է 11 ժամին առաւօտեան:

1—2

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Պատասխան «Մուրճ»
ամսագրին. Ստատիստիկական տեղեկութիւններ
կարտի նախագի մասին. Նամակ Երևանից. Նա-
մակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Համալսարանային
ցուցահանդէսը և միջազգային կոնգրէսներ. Պե-
տական լեզու և օրէնք. Նամակ Թիֆլիսից.
Արտաքին լուրեր.—ՀեՌԱՒԻՐՆԵՐ. ԲՈՐՈՍԱ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՆ

«Մուրճ» ապրիլի հատորի նամակագրութեան
բաժնին մէջ խորատու յարձակում մի տպւած տե-
սայ ինձ ուղղաւ, որին և ես կանաչաբոյս ուղ-
ղել ներկայ «Պատասխանը», ի բացատրութիւն
ձեր արկածեալ հարցադրումն:
«Ինչպէս է պատահել, կը գրէ ինձ, որ դուք
Համալսարանի մասին համար յօդուած էք գրում
Պեճ Պեճեանցի մասին, տալիս էք կենսագրա-
կան տեղեկութիւններ և նրա վիպասանութիւն-
ները մասին մի քանի դիտողութիւններ, և չէք
յիշատակում ձեր տեղեկութիւնների գլխաւոր
աղբիւրը, որը, որպէս ես թաղում եմ, երբ
պէտք է (sic) «Մուրճ» եղած լինի... Դուք, կը
շարունակէք, մի երկու կողմեր տեղեկութիւն-
ներ, որ դուք էք «Արքիւրի» մէջ, գերադասել
էք «Մուրճ» տուած տեղեկութիւնները... Եւ
այսպէս ձեր տուած տեղեկութիւնների մէջ
կան այնպիսիներ, որ դուք միայն (??!)
«Մուրճ» կարող էիք վերցրած լինել:
—Կենանք այստեղ, պ. խմբագիր, և քննենք
ձեր նկատողութիւնները:

Դուք նախ «կենսական» թէ իմ յօդուա-
ծի «գլխաւոր աղբիւրը» «Մուրճ» պէտք է ե-
ղած լինի, իսկ յետոյ անցնելով արդէն ներքին
դիտողութեան սահմանը, մի և նոյն ժամանակ կը
պնդէք թէ միայն «Մուրճ» կարող է լինել:
Դուք նախ կը յիշէք, թէ ես գերադասում
եմ «Արքիւրի» մէջ գտած տեղեկութիւնները,
«Մուրճ» տուած տեղեկութիւններէս, և այսպէս
կը պնդէք միանգամայն թէ ես այնպիսի տեղե-
կութիւններ եմ տուած, զորոնք միայն «Մուրճ»
մէջէն կարող էի քաղել:

Շատ կը ցաւիմ, որ դուք հակառակեան ծու-
ղակի մէջ էք ընկած, թողնելով դու ձեր պն-
դումներու ճշմարտութեան աստիճանը, որով նը-
կատմամբ քիչ վերջը:
«Ինչպէս է պատահել», որ դուք երկու տող
առաջ նկատողութեան գծի վրա կը գտնվիք, իսկ
երկու տող վերջը համարում եք ցուցնել զձեզ
իրաւ առաջին և երկրորդական տողերը կը
գրէիք, չէիք դիտել արդէն, որ ձեր պնդման մա-
սին հաստատուն փաստեր ունիք վերջնական
վճիռ արձակելու համար:

«Ինչպէս է պատահել», որ ես, ձեր խօսքով,
երկու տող առաջ գերադասել և առերեւոյ
«Արքիւրի» մէջ գտած տեղեկութիւններն, և ոչ
թէ «Մուրճ» տուածներն, իսկ երկու տող վեր-
ջէն, դարձեալ ձեր խօսքով, ընդհակառակն, ան-
պատճառ պէտք է «Մուրճ» քաղած լինիմ,
վասնի զի իմ գրած ծանոթութիւններն միայն այս
վերջինի մէջ կան: Ուրեմն մի և նոյն ժամանակ
թէ զանց եմ արել «Մուրճ» տեղեկութիւններն
և թէ քաղել եմ զանոնք: Թէ այս և թէ ոչ, կամ
մէկն է ուղիղ ուղեմն, կամ միւսը:

Բայց թողնելք այս գիշեր մահերն, որոնց
լուծումն անշուշտ ինձ չի վերաբերիլ և որոնք
ըստ ինքեան երկրորդական կարեւորութիւն ու-
նին միայն, — և բուն ամբաստանութիւնը տես-
նենք:

Դուք ձեր վերա յառաջ բերած խօսքերով, ձեր
ընթերցողներու առջև կաշխատելով զիս ստորնա-
ցրելով կարծել տալով թէ ձեր «Մուրճ» առանձ-
նաշնորհումն ունի Պեճեանցի կենսագրութեան և
թէ եթէ չը լինէր «Մուրճ» չէր ծանօթանար
հասարակութիւնը այդ կենսագրութեան հետ...
Դուք կամբաստանէք զիս, թէ ես՝ Համալսարանի
ստորնային մէջ պարբերաբար տպուած իմ՝ «Ռու-
սահայոց կրթականութիւնը» վերնագրով յօդուածնե-
րու Զ. (Պեճ Պեճեանց) գրած առեւ, իմ
տուած ծանօթութիւնը հաւաքել եմ «Մուրճ»
և դիտմամբ զանց եմ արել յիշատակել զայն
թող տուէք ինձ յայտնել ձեզ, պարոն խմբագիր,
որ դուք չարաչար կը սխալվիք իմ ապացոյցներն
ոչ շատ են, ոչ երկար:

Նախ. պ. Պեճեանցի գործունէութեան և կեն-
սագրութեան մէջ մասին ես անձամբ տեղեկակ
եմ:
Երկրորդ, իբրև հիմն և իբրև գլխաւոր աղբիւր
իմ տուած տեղեկութեանց, ես ունեցած եմ մի
մասնաւոր որոնման, որ իմ խնդրանքը, յատ-
կապէս իմ յօդուածի համար, ուղարկված էր
ինձ արդէն այն ժամանակ, երբ աշխարհի վրա
«Մուրճ» անուամբ հրատարակութիւն ծնունդ
չէր առած դեռ, և այն ժամանակ ալ պատրաստ
է եղած արդէն իմ յօդուածը, թէ ես աւելի ուշ ու-
ղարկուած խմբագրութեան, վասն զի «Համալսարան»
այս տարվայ առաջին համարներու մէջ նախա-
պէս պիտի տպվէր իմ Ե. յօդուածը («Ռուսներէ-
նի աղբիւրութիւնը»): Այս նամակը, որ կը կրէ
22 սեպտ. 1888 թուականը — Տիֆլիս, ինչպէս
վերև ասի, մասնաւոր (privée. частное) է,
ուստի և նոյնը յանուանէ կարող կը լինիմ հրա-
տարակել, միայն այն ժամանակ, երբ յարգելի
նամակազէն թղթաւորութիւն կը ստանամ այս
մասին: Այս աղբիւրն աւելի հարազատ և ապա-
հով է, քան «Մուրճ»:

Այսպիսի բաւական կը սեպեմ ես ի բացա-
տրութիւն ձեր «Ինչպէս է պատահել»
հարցման, պ. խմբագիր:

Զեմ կարող սակայն անուաղիր լինել միան-
գամայն ինձ եղած աղաքարութեանց՝ մի և
նոյն «Մուրճ» մէջ, թէ ես այս ինչ բանին
«վատ—հետևող» եմ, այն ինչ բանը «պատիւն է»
բերում և այլն: Եւ յայտնեմ իմ շնորհակալու-
թիւնս այդ բարի խորհուրդներուն համար և փո-
խադրածաբար կը բաղձամ անկեղծ օրէն, որ
պ. Արախտանեանց՝ ուսկից ես ցարդ ոչինչ զր-
գոնութեան պատճառ եմ ունեցած, միշտ լաւ—
հետևող լինի լրագրութեան և գրականու-
թեան, և իր խմբագրական դեռ ևս թաղմ ա-
պարիպին մէջ այնպիսի ընթացք ունենայ, որ
միայն և միայն պատիւ բերէ իրեն:

Կ. Տիֆլիս

ՍՏԱՏԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐՍԻ ՆԱ- ՀԱՆԳԻ ՄԱՍԻՆ

Այս օրերս Կովկասեան Ստատիստիկական Կո-
միտէի խմբագրութեամբ լոյս տեսաւ «Կարսի
նահանգի» վերաբերեալ ստատիստիկական տեղե-
կութիւնների մի հաւաքածու (Карсеская область,
сводъ статистическихъ данныхъ), որը կազմ-
ված է ընտարական ցուցակագրութիւններից

զորս բերած թւերի հիման վրա: Գիրքը պարու-
նակում է իր մէջ տեղեկութիւններ թէ ազգաբնա-
կութեան թիւ և թէ կալուածատիրութեան վերա-
բերմամբ, որոնց զլխաւոր կէտերը հարկաւոր ենք
համարում առաջ բերել:

Կարսի նահանգի մէջ կայ 24,344 ծուխ. բնա-
կիւնների թիւն է 174,044: Գրանցելը 90,387 հո-
գի աղամարդ է, իսկ 83,657 կին: Կարս քաղա-
քի մէջ բնակվում է 774 ծուխ. քաղաքի բնակիչ-
ների թիւն է 3,939 թէ կին և թէ աղամարդ.
կանանց թիւը աւելի պակաս է քան թէ աղա-
մարդկանց թիւը: Կարսի մէջ ապրում են թէ հայ-
լուսաւորականներ, թէ հայ-կաթոլիկներ, և թէ
ուղղափառ ու մահմետական դաւանութեան
պատկանողներ և ռուս-աղանդաւորներ: Հայ-լու-
սաւորականները թիւով ամենից շատ են. նրանց
թիւը հասնում է 2,290-ի. հայ-կաթոլիկների թի-
ւը 793 է:

Վերս յիշեցնելք, որ Կարսի նահանգի մէջ կայ
24,344 ծուխ: Հարկաւոր ենք համարում մի քա-
նի թւեր առաջ բերել այն մասին, թէ որ բնա-
կիւնների թիւից որ ազգութեան վրա օրքան է գա-
լիս:

Կարսի մէջ ապրում են 44 ծուխ ռուսներ,
իսկ ամբողջ նահանգում ռուսների կազմում են
1,525 ծուխ. յոյները՝ 3,379 ծուխ. Կարսի մէջ
467 ծուխ հայ կայ, իսկ ամբողջ նահանգում հա-
յերը կազմում են 4,795 ծուխ. (19,411 աղա-
մարդ, և 17,681 կին): Նահանգում քրդերը
կազմում են 3,699 ծուխ, թուրքերը՝ 6,466 ծուխ,
ղարափափախները՝ 3,113 ծուխ, թուրքմէները՝
1,103 ծուխ, օսերը՝ 65 ծուխ: Պարսիկներ, լեզ-
գիներ, չերքէզներ, վրացիներ և ասորիները ան-
շուշտ թիւ են կազմում:

Գրքի մէջ բերած են տեղեկութիւններ գրա-
դիտութեան մասին (միայն աղամարդկանց վերա-
բերմամբ): Գրանցի երևում է, որ նահանգի մէջ
բնակվող ռուսները խօսում են ռուսերէն և ծա-
նօթ չեն տեղական լեզուների հետ: 5,488 հոգի
ռուսներից միայն 352 գիտեն գրել և կարդալ
ռուսերէն. մնացածը անգրագէտ են: Յոյների ըն-
տանիկան լեզուն բացառապէս յունարէն է:
Ռուսներէն գրել-կարդալ իմացող յոյների թիւը 63
է. յոյներից գրագէտ են միայն 1,043 հոգի (ո-
րոնցից երկուսը հայեր են գրում և կարդում),
իսկ 11,152 հոգի անգրագէտ են: Քրդերը հա-
մարեա բոլորն էլ անգրագէտ են. մի քանի հոգի
միայն գրել-կարդալ գիտեն թուրքերէն: Հայերի
ընտանիկան լեզուն հայերէն է. 847 հայ գրա-
գէտ են, 86 հայ էլ գրագէտ են ռուսաց լեզ-
ւի մէջ. անգրագէտ հայերի թիւը հասնում է
18,473-ի. ռուսներէն խօսել գիտեն 288 հայեր:
Մարդը նահանգում ռուսներէն լեզու տնային
լեզու է միայն 5,489 մարդու համար. իսկ 84,898
մարդ խօսում են ուրիշ տեղական լեզուներով:
Ռուսներէն լեզուով գրել-կարդալ գիտեն 516 հո-
գի. ուրիշ տեղական լեզուներով՝ 3,044 հոգի,
իսկ անգրագէտների թիւն է 86,827:

Որքան ուրեմն յետ է մնացել գրագիտութիւնը
այդ նահանգում... Միջիշխական չեն նոյնպէս
և այն տեղեկութիւնները, որոնք բերված են այդ
գրքի մէջ կրթութեան վերաբերութեամբ: Ամբողջ
Կարսի նահանգում կայ 10 մարդ միջնակարգ
գաղութի կրթութեամբ, 37 մարդ՝ ստորին 3-րդ
կարգի դպրոցներից, և 986 մարդ ստորին 4-րդ
կարգի դպրոցներից: Տնային ուսում են ստացել
2,527 մարդ, իսկ 86,827 մարդ ոչ մի տեղ ու-
սում չեն ստացել:

Մարդը նահանգում հասարակական տիրապե-
տութեան տակ կայ 467,882 դէսիւտալին վարե-
լահող, և 513,614 դէսիւտալին արտաւտեղի: Այ-
դիւնների թիւն է 2,068: Անանապահութիւնը բա-
ւական տարածված է: Ամեն տեսակ արհեստա-
ւորների թիւը հասնում է 1,204-ի:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Ապրիլի 20-ին

Խօսելով մեծ-պատի վերջին շաբաթներում տե-
ղիս կրօնի զանգեւում կարգացած հրապարակա-
կան դաստիարակութիւնների մասին, պարտաւո-
րութիւն ենք համարում յայտնելու այն ընդհա-
նուր գոհացուցիչ տպագրութիւնը, որ գործեց
մեզ վրա վերջին դաստիարակութիւնը: Դասախօսն
էր երիտասարդ իրաւաբան պ. Գաբրիէլ Մնացա-
կանեան. նիւթն էր՝ «Յանգամանքների մասին ընդ-
հանրապէս և Երևանի նահանգում մասնաւորա-
պէս»: Պ. դասախօսի լեզուն (ռուսերէն էր դա-
սախօսութիւնը) ոչ շատ կատարեալ էր. նիւթը
շատ թաղմ, հետաքրքրական զատախօսութեան
երկրորդ մասը աւելի ուշագրութեան արժանի
էր և անցաւ աւելի կենդանի կերպով: Մնացաւ
կերպով խօսեց պ. դասախօսը տեղական ազգա-
բնակչութիւնների՝ հայերի, պարսիկների և քրդերի
ազգային, կրօնական և ցեղական յատկորոշ տար-
բերութիւնների վրա. յանգամանքների զլխաւոր
չարժաւորները անվիճելի էին գրեթէ խկապէս
արժէք աւելի ընդարձակ ծաւալով խօսել այդ
դասախօսութեան վրա, եթէ հաւատացած չը լի-
նէինք որ պ. դասախօսը անտարակոյս մասնակի
մէջ տպագրութեան տալով, ինքը դիւրութիւն
տուած կը լինէր ստուգապէս ծանօթանալու իր
հայեացքների հետ: Վերջում պարոնը միահա-
մուռ ծախահարութեան արժանացաւ իր ունին-
գիւր ռուս, հայ և պարսիկ ընտիր հասարակու-
թիւնից: Թէ պ. նահանգապետը և թէ ուրիշ շա-
տերը չնորակաւորվին յայտնեցին երիտասարդ
դասախօսին:

Մեր յատուկ պարտաւորութիւնը համարած
լինելով որ առաջ խօսելու քաղաքացիներին
գրադեցնող օրհանգրեքի վերաբերմամբ «Մշակի»
մէջ, ամենին չէինք սպասում թէ երևանցիները
դիտմամբ հակառակ կը գործեն միանգամայն ի
շնամ իրանց շահերի խօսեցինք դպրանոցի նոր
չէնք մասին, — ոչ ոք եղաւ հոգաւոր, այլ ընդհա-
կառակ պաշտօնապէս հոգատար լինողները ա-
նապարհին իրանց ուղածն անելու. արդէն Գե-
որգեան եղբայրները հիմքը փորում են նոր դահ-
լիւնի, այն էլ դպրանոցի չէնք հիմնական ուղ-
ղութեան հակառակ: Դահլիճի երկայնութիւնն
ընկած է դպրանոցի չէնք լայնութեամբ, հետեա-
պէս և փակում է գլխաւոր միջանցքի ուղղու-
թիւնը... Խօսեցինք և յորդորեցինք մեր քաղաքա-
ցիներին հետաքրքրութեամբ մտնելու նոր հոգա-
բարձուների համար պատգամաւորների ընտրու-
թիւններին, — հակառակը եղաւ Ս. Սարգիս առաջ-
նորդական եկեղեցում — 20—25 հոգով ընտրել են
15 պատգամաւոր. այսպէս և կոյնի Ս. Յովհաննէս
ու Ջօրայար եկեղեցում: Պօղոս Պետրոս եկեղեցում
ուղիղ 2 կամ 3 հոգով ընտրել են 20 հոգի, գրեթէ
այսպէս և Կաթողիկէ եկեղեցում: Եւ առաջիկայ
կիրակի օրը այդ թիւով ընտրված պատգամաւոր-
ները ժողովվելու են հոգաբարձուների ընտրելու
թէ այսպէս և թէ այնպէս՝ եղածն եղել է. այժմ
էլ վախենում ենք յորդորել պ.պ. պատգա-
մաւորներին, որ անշուշտ հետաքրքրվում են դը-
նալ ընտրութեան օրը անապառ ու խղճի մտքով
քուէ տալու այնպիսի անձինքներին, որոնք իրանց
դպրոցասիրութեամբ, իրանց կրթութեամբ, հաս-
կացողութեամբ, զիրքով, եռանդով՝ արժանի լի-
նեն մի թեմական դպրանոցի հոգաբարձական
պաշտօնին, — որ մի գուցէ այս միանգամայն բա-
րեւիտ յորդորների ու սպասելիքների հակառակ
տեսնելու դժբաղդութեամբ արժանանանք: Ճշը-
մարիտ որ մեր երևանցիները թաւա են և ան-
պարտաճանաչ: Նրանց առաջնորդող՝ ոչ ոք չը
կայ, իսկ մոլորեցնող՝ ամենքը մեր պաշտօնական
գործիչներն են...

Վերջապէս ասում են, որ վերջնական կերպով
դպրանոցը յունիսի 4-ին է տօնելու իր յիսնամեայ
գոյութեան հանդէսը. ցանկանք որ այս վերջնակա-
նը լինի և դարձեալ չը փոխվի վճիռը: Հարգանք-

նութիւնները սկսուեալ են ապրիլի 24-ին, վերջա-
նալու են մայիսի 25-ին: Քննելի առաջին ա-
ռարկան է հարկէ կրօնը կը լինի: Ասում են 60
քննութիւն է նշանակված օրական 2—3 տեղը:
Քննվում են, ինչպէս 50 տարի առաջ, բոլոր դա-
սարանացիք և բոլոր առարկաներից, երեւի ցոյց
տալու համար որ մեծ տարբերութիւն չը կայ
այժմեան և անցեալ ժամանակներում...

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թէլաւ, ապրիլի 10-ին

«Մշակի» № 15-ում տպագրված էր մի լուր
Թէլաւի դպրոցների հոգաբարձուների անկանոն
վարմունքի մասին ուսուցիչների և ուսուցչուհի-
ների հետ, որը դրդել է գործակալ Տէր-Սարգսեա-
նին գրել «Մշակի» մէջ մի երկար նամակ, որով
նա յարձակվում է ինձ վրա և կամենում է զեր-
պարտութեամբ ցածրացնել իմ վարքը հասարա-
կութեան առաջ: Որպէս զի տարբարացնում ինձ և
մաքրում ինձ վրա բարդած արտաքին, ես ստիպված
եմ դիմել ձեզ, խնդրելով տպագրելու հետեւեալ պա-
տասխանը: 1887 թ. վերջերին, դեկտեմբեր ամսին,
ես «Մշակի» յայտարարութիւնների մէջ կարգադրի,
որ Թէլաւի հայոց երկսեռ ուսումնարանների
համար հարկատու է ուսուցիչ լեզուի ուսուցիչ:
Ես դիմեցի ու. առաջնորդին, որ և ինձ նշանա-
կեց ուսուցիչ Թէլաւի Գնալով Թէլաւ, ես ծանո-
թացայ գործակալ Տէր-Սարգսեանին հետ, որը նա-
խագահ է այստեղի հոգաբարձական խորհրդին:
Նա ինձ հետ շատ քաղցր և յարգանքով էր վար-
վում, կամենում էր ինձ հետ պայմանաւորվել
10 տարով ուսուցիչ մնալու Թէլաւում: Անցաւ
87/88 ուսումնական տարին: Յաջորդ ուսումնական
տարվայ համար էլ ու. առաջնորդը ինձ ու կնոջս
կրկին նշանակեց Թէլաւում: Օգոստոսի վերջերին
ինչացինք մեր պաշտօնատեղիէն. հոգաբարձութիւ-
ն և գործակալը առաջարկեցին ու. Բաղդասա-
րեանին 24 դաս ունենալ 400 ր., կամ 18 դաս
300 ր. ուսուցիչ: Նա չը համաձայնեց այս պայ-
մաններից ոչ մէկին, որովհետև այդ հարցը վճռու-
ված էր ու. առաջնորդի ներկայութեամբ, որ նա
ունենայ 18 դաս առաջին պատ. 400 ր.: Այդ
տեսանկյունով, ու. Բաղդասարեան զիմեց ու. առաջ-
նորդին հեռագրով և հաղորդեց նրան, որ հոգա-
բարձութիւնը չեղով է իր առաջարկած պայ-
մաններից, ու. առաջնորդը հրամայեց հոգաբար-
ձութեանը կատարել իսկութեամբ իրանց առա-
ջարկած պայմանները: Ս. Առաջնորդի վճիռը
մեղմացրեց գործակալ Տէր-Սարգսեանին և հոգա-
բարձութեանը, որից յետոյ զեկտեմբեր ամիսը
անցաւ խաղաղութեամբ, ուսումնարանների գոր-
ծը անցնում էր, ինչպէս հարկատու էր, թէպէտ
կրկին ուսուցչի հարկաւորութիւն էր զգացվում,
որի համար ուսուցչական խումբը անդադար
խնդրում էր հոգաբարձութեան վարձել հայոց լե-
զուի և թաւաբանութեան ուսուցիչ: Հոգաբարձու-
թիւնը ամեն անգամ յետաձգում էր և վերջը
խնդրեց միացնել օրիորդաց ուսումնարանի I և
II պատրաստականները և կազմել մի շարքովայ
ժամանակով դասադուրակ, որից յետոյ խոտա-
ցան վարձել ուսուցիչ և կազմել կանոնաւոր դա-
սադուրակ: Որովհետև դասադուրակը կազմվում
էր շատ կարճ ժամանակով և հէց միւս օրվայ
համար, ուսուցիչները շտապում էին և ամեն մի-
նը նրանցից վերցրեց իրանց խոտացածից կամ
աւելի, կամ պակաս դասեր, այնպէս որ տիկին
Բաղդասարեան 18 դասի փոխանակ վերցրեց 12
դաս երկու միացրած բաժանումներում, իսկ
ես վերցրի 8 դաս թաւաբանութեան, չը նայելով
որ ես չէի յանձն առել, որովհետև ես հրաւիրված
էի միայն ուսուցիչ լեզուի, ուսուցիչ պատմութեան
և ուսուցիչ աշխարհագրութեան համար: Այդ ժա-
մանակներում գործակալ Տէր-Սարգսեան գնալով
Թիֆլիս, հաղորդեց թէ ու. Բաղդասարեան վեր-
ցրեց միայն շաբաթական 12 դաս, բայց չէ բա-
ցատրել թէ ինչպէս և ինչից զրգված է վերցրել
12 դաս 18-ի փոխանակ և դրա համար ու. ա-
ռաջնորդը հրամայել է վճարել միայն ուսուցչի 2/3
մասը:

Գործակալ Տէր-Սարգսեան ինձ մեղադրում է
նրանում, որ ես փախել եմ աշխատանքից և իս-
կութեամբ չեմ կատարել պարտքս: Նա իր դար-
գացմամբ անկարող է գնահատել ուսուցչի ըն-
դունակութիւնները, մանաւանդ ուսումնական և
մանկավարժական տեսակետից, հետեւապէս նշա-
նակութիւն տալ նրա կազմած դադափարներին
այս կամ այն ուսուցչի մասին միանգամայն ան-

կարելի է: Բայց եթէ հասարակութիւնը կամե-
նում է փոքր ի շատէ հասկացողութիւն ունենալ
իմ պարագիծները և իմ պարտականութեան կա-
տարման մասին, կարող եմ ասել, որ առաջին
իմ Թէլաւ գնալուց երկու ամիս յետոյ մեր դպ-
րոցը այցելեց Գարսկու օգնական պ. Գրէն,
քննեց աշակերտներին և լսելով իմ դասաւու-
թիւնը՝ շատ դժմայն ինձանից: Երկրորդ՝ քնն-
նութեան ժամանակ ներկայ էին և քաղաքային
ուսումնարանի տեսուչը և մի քանի տեղացիներ,
որոնք, տեսնելով իմ աշխատանքս, միաձայն
վկայեցին, թէ ես արել եմ այն, ինչ որ կախված
է մարդուց և ինչ որ կարող էր անել մի մարդ:
Երրորդ՝ թող ներքին ինձ ընթերցողները, որ ես
ստիպված եմ համեստութեան շրջանից դուրս գալ և
այդ տողերը իմ մասին գրել. իսկ ինչ վերաբե-
րում է իմ խիստ վարմունքին աշակերտներին
հետ, ինչպէս ասում է Տէր-Սարգսեան, պէտք է
ասեմ, որ այլ տեսակ վարվել անկարելի է և
նշանակաւոր ուսումնարանին, ի նկատի ունենա-
լով մեր տղայոց ուսումնարանում տիրապետող
տգել և զրուելի յատկութիւնները և վարք ու
բարքը: Իմ խիստ վարմունքի միակ նպատակը և
հետեւանքը եղել է ուսումնարանի օգուտը: Տէր-
Սարգսեան զրկված է զործի մէջ թափանցելու
ընդունակութիւնից. նա զբաղված լինելով իր
անձնական գործերով, ժամանակ չունի մտածել
ուսումնարանների վրա և մտածելով իր սուրբ
պարտականութիւնները, որ կազմած է կատարել,
մինչև անգամ չը գիտէ թէ՛ քանի աշակերտ և
աշակերտուհի կար անցեալ տարի և քանիսը կան
այժմ. նրա խօսքով անցեալ տարի եղել են 90
աշակերտուհի և 70 աշակերտ, իսկ հիմա 60-ից
պակաս աշակերտուհի և 50-ից պակաս աշա-
կերտ: Սակայն, ինչպէս ցոյց են տալիս մեր ցու-
ցակները, 1888 թ. յունվարին եղել են՝ 72 ա-
շակերտուհի և 57 աշակերտ, իսկ այժմ՝ կան 60
աշակերտուհի և 54 աշակերտ: Ինչպէս տեսնում
է ընթերցողը, թէպէտ սաների թիւը պակասել է,
բայց ոչ այնքան, որքան ասում է Տէր-Սարգսեան
և այս պակասելու պատճառը ոչ թէ ես եմ, այլ
դա առաջ է եկել հետեւեալ պատճառներից, ու-
րոնց մէջ մեղաւոր են Տէր-Սարգսեան և նրա հետ
համաձայն հոգաբարձուները. նախ՝ 9 աշակե-
րտուհի, որոնք փոխվել էին չորրորդ բաժնա-
մունքից հինգերորդը և 8 աշակերտներ, որոնք եր-
րորդ բաժնամունքից փոխվել էին չորրորդը, թո-
ղեցին ուսումնարանը, այս բաժնամունքները
չը բացվելու պատճառով: Երկրորդ՝ սանիկները
թողնում են ուսումնարանները այն պատճառով,
որ մի քանի առաւելայ բոլորովին հանրածու
Թէլաւի ուսումնարանների դասացուցակից: Օրի-
որդաց ուսումնարանի չորրորդ բաժնամունքում
չը կան բնական պատմութեան դասեր, III և IV
բաժնամունքում չը կան թաւաբանութեան դա-
սեր, I և II բաժնամունքներում չը կան ձեռա-
գործի դասեր, իսկ գծագրութեան և վալիչա-
գրութեան դասեր բոլորովին չը կան երկու ու-
սումնարաններում: Եւ երրորդ՝ հոգաբարձութեան
անարգար վարմունքը սանիկներին հետ՝ մէկ բա-
ժնամունքից միւսը փոխելու ժամանակ:

Գրիգոր Բաղդասարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նրեան, ապրիլի 21-ին

Հանգեցէ՛ք ձեր պատմական լրագրի էջերում մի
անկիւն շնորհի յետադաշ քանի մի սող ծանուց-
մանը: Նրեանի հայոց հոգևոր դպրանոցի հոգա-
բարձութիւնը, ինչպէս խոստացած էր հասարա-
կութեանը «Յիսնամանկ»-ների հետ ուղարկված
նամակներում, այսօր ի կատարումն իր խոստ-
ման՝ ծանուցանում է ի դիտութիւն դպրոցական
գործով հետաքրքրվող հասարակութեան, որ ա-
ռաջինայ յունիսի 4-ին կատարվելու է դպրանո-
ցի յիսնամանակի առիթով ուսումնական հանդէս
հետեւեալ կերպով. I համաժողով ակնարկ յիսնա-
մանայ անցեալի վրա. II 1886/9 եռամսեակի թէ՛
տնտեսական և թէ՛ ուսումնական մանրամասն
համարաւորութիւն, III «Յիսնամանկի» առիթով
այլ և այլ տեղերից ստացված գրութիւնները ամ-
փոփոխ և յիշատակութիւն՝ թէ՛ ով և որքան
զուամար է նուիրել դպրանոցի օգուտին և IV միջա-
նակաշաղկապութիւն:

Հանդիսի առիթով հոգաբարձութեան հետ որ
և է յարաբերութիւն ունենալ ցանկացողները
թիւթ բարեհաճեն դիմել դպրանոցի հոգաբարձու-
թեան դանձապահ-անդամ պ. Կարապետ Գատա-

մեանցին այս հասցեով. Ծրиванъ, г. Карапету
Дадаянцу, члену попечительства Ծрив. арм.
дух. семинаріи.

Հոգաբարձութեան անդամ՝ Աւետիս Թեո-
դանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս արդէն յայտնի է ընթերցող հասարա-
կութեան, արանից մի քանի ժամանակ առաջ
Թիֆլիսի դուստն՝ Կովկասեան ուսումնարանա-
կան շրջանի հոգաբարձուի առաջադրութեան ա-
ռիթով՝ վճռել էր քաղաքային փողերից նպատ-
տալ Թիֆլիսի արական պրօգրիմնազիւլին միայն
այն պայմանով, որ վրաց և հայոց լեզուները
պարտաւորեցնէ զառնային տեղական դպրոց-
ներում և հայ աշակերտներին կրօնը աւանդվէր
հայոց լեզուով: Գումայի այդ որոշումը ուսում-
նարանական հոգաբարձուն ներկայացրել էր լու-
սաւորութեան միջնորդութեան վերահայեցողու-
թեանը: Այժմ արդէն ստացված է միջնորդի
կարծիքը՝ այդ մասին, և ինչպէս հաղորդում են
տեղական ուսու լրագրիները, ուսումնարանական
շրջանի հոգաբարձուն հաղորդել է այս օրերս
քաղաքագլխին, որ դուստի յիշեալ որոշումը մի-
նիստըրը առանց հետեւանքի է թողել, ըստ որում
«քաղաքային դուստն իրաւունք չունի քննելու
գանձարանի հաշուի հիմնած» Թիֆլիսի բոլոր ու-
սումնարանական հաստատութիւններում ուսման
գործը այսպէս կամ այնպէս կարգադրելու հարցը:
Ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կողմից
հաղորդած այդ տեղեկութիւնը պէտք է ենթարկ-
վի դուստի քննութեան:

Թէլ. Ա. ի. Յ մեզ գրում են հետեւեալ: «Այստե-
ղի քաղաքային դպրոցի ուսուցիչները, քանի մի
շաբաթ առաջ, կամենալով իրանց աշակերտնե-
րով մի հեռու դրօսանք կատարել, գնում են ի-
րանց սաներով Ալազան գետի հովիտը, Թէլաւից
12 վերստ հեռավորութեամբ: Բայց այդտեղ
դպրոցի առաջին դաստան աշակերտներից մին,
Լ. աղգանունով, անտառում երթնելով անյայտ
որոտըրկվալ վրաւորվում է կոտորակներով: Մի
շաբաթվայ սարսափելի տանջանքներից յետոյ ու-
ղարմին վախճանվեց: Նա օրինակելի աշակերտ
էր և Թէլաւից 3 վերստ հեռու գտնվող իր գիւ-
ղից ամեն օր յաճախում էր դպրոցը»:

Երեմի. Յ մեզ գրում են. «Մայիսի 1-ին ըս-
պառում են Նրեանում պարսից Նաւաբէ-դին-շահին
Տեհմում են այս առիթով մեծածախս պատրաս-
տութիւններ: Նոյն օրը գալու է և վ. Կաթողի-
կոսը շահի հետ տեսակցելու: Այս անգամի ըն-
դունելութիւնը անհամեմատ աւելի հանդիսաւոր
է, քան թէ շահի առաջին անգամի գալու ժամա-
նակը»:

ԳՕՐԻՍԻՅ մեզ գրում են. «Գողութիւնները և
նոյն իսկ սպանութիւնները սովորական են դար-
ձել այս կողմերում և այդ բոլորը զլիւսաւորապէս
խոկենդարեցի չնորովի, որին մինչև այժմ չեն
կարողացել ձերբակալել»:

Երեմի. Յ մեզ գրում են. «Մայիսի 21-ին նը-
շանակված է առաջին կարգի ձայնաւորների
ընտրութիւնը, ապա երկրորդ և երրորդ. իսկ յու-
նիսի 4-ին քաղաքագլխին ընտրութիւնը: Նոյն օրը
թեմական դպրոցի հոգաբարձութիւնը կատարելու
է յիսնամանակի հանդէսը դպրանոցում»:

Ինչպէս մեզ գրում են ԲԱԳՈՒՅ, այս օրերս
երկու բանւոր թուրքեր իրանց անդուլտութիւնից
մնացին երկաթուղու գնացքի տակ և տեղն ու-
տեղը հոգին աւանդեցին:

Երեմի. Յ մեր թղթակիցը մեզ գրում է.
«Հաստատ աքերկերից տեղեկանում ենք, որ
թեմական դպրանոցի հոգաբարձութեան կողմից
տարածված «Յիսնամանկ» գրքերը սիրալիք ըն-
դունելութեամբ են ստացվել ամեն տեղ: Նուիրա-
բերութիւններ այդ առիթով շարունակ ստաց-
վում են հոգաբարձութեան մէջ և զարմանալին
այն է, որ երեւանցին է, որ անտարբեր է դեպի
իր ստացած գրքը ու նուիրաբերութեան մէջ էլ
ժլատ օրինակ տաւ քաղաքների չափաւոր հա-
րուստներից ստացվում է 20—25 ր. նուէր, իսկ
երեւանցի բուսական հարստից հաղիւ 10—15 ր.,
և ոչ աւելի»:

Թիֆլիսաբնակ Ներսէս Յովհաննէսեան Արղու-
թեանց, բազմանդամ ընտանիքի տէր, ամենա-
թշուառ գրութեան մէջ գտնվելով, այս օրերս ե-
կաւ մեր խմբագրատուն, խնդրելով որ մենք,
տպագրելով նրա մասին լուրը, դիմենք հասա-
րակաց բարեգործութեան: Պարոնը ամենախղճալի
գրութեան մէջ է այն պատճառով էլ, որ չը նայե-
լով թէ զու. երկուստաւոր է, 45 տարեկան, բայց
մի տղը կորցրած ունի, և ուրեմն չէ էլ կարող
աշխատել և կրկին ընդունվել որ և է ծառայու-
թեան մէջ: Առաջ նա պետական ծառայութեան
մէջ էր գտնվում: Պարոնը ունի կին և հինգ դա-
սակներ: Հրաւիրում ենք հասարակութիւնը օգնել
Արղութեանցին, նմանապէս դարձնում ենք պա-
րոնի գրութեան վրա և մեր հայոց Բարեգործա-
կան ընկերութեան ուշադրութիւնը: Եթէ մէկը
ուզենայ դրամական նպաստ տալ պարոնին, կա-
րող է փոքր հասցնել «Մշակի» խմբագրութեան:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Ներսիսեան
դպրոցի վեցերորդ վերջին դաստան աշակերտ-
ների վերջնական քննութիւնները արդէն սկսված
են:

Լսում ենք, որ շուտով մի խումբ մասնագէտներ
Թիֆլիսի այգեգործական դպրոցի վերջին դասա-
տան աշակերտների հետ միասին պէտք է գնան
Կաւառները խաղողի օրթի հիւանդութիւնների
դէմ միջոցներ գործադրելու համար: Նախաձեռ-
նութիւնը պատկանում է Կովկասեան Գիւղատն-
տեսական ընկերութեան:

Տխուր տպաւորութեամբ ստիպված ենք մատ-
նանիշ անելու այն անգործ գրութեան վրա,
որի մէջ գտնվում է վերջին ժամանակներս Կով-
կասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը: Մի
երկու տարի առաջ ընկերութիւնը ներշնչված էր
մի առանձին ողբորութեամբ, կարգացվում էին
հետաքրքրական գեկուցումներ, ընկերութիւնը
ցանք էր գործ գնում կապվելու երկրի անտեսու-
թեան վերաբերեալ կենդանի հարցերի հետ, ընդ-
հանուր ժողովներ լինում էին կենդանի, իսկ
այժմ ընկերութիւնը կարծէք մի տեսակ անշա-
րժութեան է մտնում, և այդ անշարժութիւնը
զուցէ կատարեալ մեռելութիւն լինել, եթէ չը
լինէր Կովկասեան ցուցահանդէսի խնդիրը...

Մեզ յայտնում են, որ Թիֆլիսում շուտով պի-
պի հրատարակվի մի պատկերապարզ շաբա-
թաթերթ «Տարազ» անունով: Նոր հրատարակու-
թիւնների վերաբերեալ այդ տեսակ լուրերը շատ
են հրապարակ գալիս, բայց այդ լուրերը այն-
քան քիչ են իրականանում, որ մենք ակամայ
դժուարանում ենք հաւատալ այդ տեսակ խնդ-
րատ ինքեան ուրախալի լուրերին:

Թիֆլիսի քաղաքային դուստն ապրիլի 24-ի
նիստում լսելով վարչութեան զեկուցումը լիանալով
սիֆիլիսական հիւանդանոց բանալու մասին, հա-
մարտ միաձայն ընդունեց այդ առաջարկութիւ-
նը: Հիւանդանոցը պէտք է կրէ հետեւեալ անու-
նը. «Քաղաքային իգական բուժարան, հիմնված
ի յիշատակ Ալէքսանդր II կայսրի քսանհինգա-
մեայ թագաւորութեան»: Մտադրութիւն կայ այդ
«իգական բուժարանը» բանալ 1890 թ-ի յուն-
վարից:

Ապրիլի 25-ին Թիֆլիսի նահանգական դատա-
րանում աւարտվեց ոստիկանական ծառայող Մի-
նամիզվարովի գործը: Մինամիզվարով մեղադրվում
էր իր կնոջ սպանելու գործում՝ իրրեւ դրողը և այդ
սպանութիւնը կատարել է մի ոմն Էյուր Սալի-
Օղլի, որին Մինամիզվարով փողով կաշառել է և
գործը է դարձրել՝ կնոջը սպանելու համար:
Դատարանը վճռեց՝ զրկել Մինամիզվարովին իր
բոլոր իրաւունքներից և ենթարկել տաժանակի
աշխատանքների անորոշ ժամանակով, իսկ Էյուր
Սալի-Օղլուն զրկելով իր իրաւունքներից տաժա-
նակի աշխատանքների ենթարկել 6 տարի և 8
ամսով:

Մեզ գրում են Կ. Պոլսից, որ խրմեան Հայ-
րիկ, որ վերջին ժամանակներս տկար էր, այժմ
կատարելապէս առողջացել է: Հաղորդելով այդ
ուրախալի լուրը, նամակագիրը աւելացնում է.
«Բայց և այնպէս Հայրիկը վերին աստիճանի
յոգնած և դաւանացած է»:

Կ. Պոլսից մեզ գրում են. «Պ. Ալեքանեան եր-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանկոպոլից լուր է ստացված Վիեննայում, թէ այնտեղ անկարգություններ են սկսվել, իսկ թէ ինչ պատճառով և ինչ չափով, այդ մասին դեռ ես այժմ ոչինչ չայտնի չեմ։

—Փարիզից հեռագրում են, որ «Petit Journal» չեք բուլանդական լրագրի բաժանվելով բուլանդական կուսակցությունից՝ անցել է նրա հակառակորդների կողմը։

—Ինչպես երևում է վերջին տեղեկություններից Լիսաբոնում և Մադրիդում կազմված կաթոլիկական ժողովները, որոնց նպատակն է ներկայացնել Հռոմի պապին աշխարհային իրաւունքները վերականգնելու գործին, ոչինչ համակրություն չեն գտնում հասարակաց կարծիքի կողմից։

—«Presse» լրագիրը մի առաջնորդող յոգուածով յայտնում է, որ Կոնստանդնուպոլիսում կառավարության ներքոյ Բոլգարիայի պետական կազմակերպությունը կանոնադրվել և հաստատուն է դարձել։

—Խալիլյանը ներկայումս մեծ ցոյցեր են լինում Ուսթընում թագաւորի Բերլին գալու առիթով։ Արմատական և ազատամարտ կուսակցությունները դէմ են թագաւորի Բերլին գնալուն, և անդադար համակրական ցոյցեր են անում դէպի Ֆրանսիան, արժանիքով ֆրանս-խալիկական դաշնակցութեան գաղափարը։

—Վիեննայից հեռագրում են, որ կաթոլիկ հոգևորականների ժողովը՝ պաշտպան հանդիսանալով պապին աշխարհային իրաւունքներ տալու մտքին, սկսել է ջերմ պրոպագանդա անել այդ մտքի իրագործման համար։ Կաթոլիկ հոգևորականությունը, ինչպես սովորաբար անում է, միջոցներով մէջ տարբերություն չէ դնում նպատակին հասնելու համար։

—Լոնդոնից գրում են, որ գուցէ Անգլիան կը փոխի իր մտադրությունը և պաշտօնական մասնակցություն կունենայ Փարիզի ցուցահանդիսում։

—Լուր կայ որ Միլան թագաւորը մտադրություն ունի վերադառնալու Բէլգրադ։ Այդ առիթով անա թէ ինչ է հեռագրել Երուսաղէմից Միլան թագաւորը Ռիտիլին։ Էնձ բոլորովին՝ արտահոգություն չեն պատճառում ոչ լրագրիչների տեղեկությունները և ոչ էլ նախկին թագուհու վերադարձի վերաբերեալ լուրերը։ Ձեր հայրենասիրական զգացումները և ձեր քաղաքական հեռատեսությունը ինձ առիթ է տալիս հաստատուել, որ Սերբիան չի դառնայ ստոր ինտրիգների կենտրոն։ Այդ պատճառով խնդրում եմ իմ մտակայ վերադարձի մէջ կասկածի նշան չը տեսնել դէպի ձեզ։ Ես ցանկանում եմ տեսնել իմ սիրելի որդու հետ, և երբ որ Բէլգրադում մնալուց յետոյ կուղևորվեմ Փարիզ։

—Լոնդոնից հեռագրում են, որ ապրիլի 1-ին (26-ին) անգլիական արտաքին գործերի մինիստրությունը մի պաշտօնայն ուղարկեց գեներալ Բուլանտին մօտ յայտնելու նրան այն պայմանները, որոնցով միայն նրան թոյլ կը տրվի մնալ Անգլիայում։ Բուլանտին որոշել է առ այժմ չը երևալ հրապարակական տեղերում։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 ապրիլի։ Երէկ եւպոնական պրինց Գալիլէիաօ Արիստոքաւային Գուտշինոյում ընդունեց թագաւոր Կայսրը, ներկայութեամբ թագուհու Կայսրուհու և թագաժառանգի Պրինցը։ Ներկայացրեց Նորին Մեծութեան Կայսրուհուն եւպոնական կայսերական աստղի շքանշանը։ Ապա պրինցը հրաւիրեց Բարձրագոյն նախաճաշելի։ Ապրիլի 28-ին պրինցը ուղևորվելու է Մոսկվա։ Մինիստր Կոմս Տոյսոյ գիշերը անհանգիստ անցկացրեց նեղաբոց հազի պատճառով։ Կողքի ցաւը պակասեց։ Տարբերվելը 37,9, զարկերակը—104։ Պրոֆէսոր Զախարին երէկ ուղևորվեց Մոսկվա։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ չաբաթի օր Պրոֆէսոր Զախարին զբոսնում էր Կոմս Տոյսոյի կոմս Տոյսոյի առողջութեան մասին զեկուցում անելու համար։

ՓԱՐԻԶ, 24 ապրիլի։ Փարիզից Վերսալ տանող ճանապարհին նախագահ Կարնոյին ղրմաւորներն իշխանությունները ներկայացրին իրենց

զարնակությունը։ Վերսալի պալատում անատի նախագահը մի ճառ խոսեց, որի մէջ ի միջի այլոց ասեց, որ եթէ ֆրանսիական յեղափոխությունը յանցանք գործեց ցնորներին համարձակութեամբ, այժմեան ֆրանսիացիներն էլ յանցանք են գործում չունենալով անձնագործություն, չը հասկանալով իրանց պարտաւորությունները և ունենալով տատանվող կամք։ Նախագահը պատշաճաւոր կերպով յիշատակեց 1789 թվի գործիչներին, որոնք ահագին ջանքեր և զոհաբերություններ անելով Ֆրանսիային մեծ ծառայություն մատուցին։ Պարգարանելով 1789 թվի սկզբունքները, և հրաւիրելով ֆրանսիացիներին դէպի համերաշխություն, Կարնո ասեց. «Թող տոնախմբվող այն փառաւոր շրջանը ծառայէ իբրև պատկեր, որով ֆրանսիացիներին հաշտութեան ընդհանուր սիրով ղեմելու դէպի համադաշին բարորդությունը՝ յանուն ազատութեան և հայրենիքի»։ Վերսալի եպիսկոպոսը դիմեց նախագահ Կարնոյին մի ճառով, որով հաստատում էր որ 1789 թվի հոգևորականությունը մասնակցեց էր բարենորոգումներին ցանկութեամբ, և այժմեան հոգևորականությունը, —ասեց եպիսկոպոսը,—ներշնչված է նորնպիսի բարձր զգացումներով։ «Չը բաժանենք ուրեմն մեր սիրոյ և աղօթքների մէջ Ֆրանսիան եկեղեցուց»։

ԲԱՊՈՒ, 25 ապրիլի։ Քաղաքային դումայի Ալեքսանդրեան դահլիճում, դադարի խորհրդական Կ. Ա. Սկալկովսկու նախագահութեամբ բացվեց նախարարները իրենց հինգերորդ ժողովը։ Նախագահը մերժեց այն խնդրերը, որ առել են 20 նշանաւոր ֆիրմաներ, և որով խնդրում են աշխատել ժողովի ծրագրի մէջ մտցնելու նախարարներին հարցը։

ՀՈՍՄ, 25 ապրիլի։ Խալիլյան շատ քաղաքներում տեղի ունեցան համակրական ցոյցեր դէպի Ֆրանսիան։

ՓԱՐԻԶ, 25 ապրիլի։ Յուցահանդիսի բացումը տեղի ունեցաւ պրոպագանդի համաձայն։ Տիրար յայտնեց, որ ցուցահանդիսի աշուղները սպասածից էլ աւելի է։ Նախագահ Կարնո Ֆրանսիայի կողմից շնորհակալութիւն յայտնեց բոլոր աշխատակիցներին և յայտարարեց ցուցահանդիսը բացված։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 25 ապրիլի։ Ներքին գործերի մինիստր Կոմս Տոյսոյ այսօր, կէսօրից յետոյ, ժամի 4 1/4-ին, վախճանվեց։ Երէկ սերբիական միտրոպոլիտ Միլայիլ դուրս գնաց Պետերբուրգից։ «Гражданинъ» լրագիրը լսել է, որ թագաւորական գնացքի խորտակման գործը ընկնելու է հոկտեմբերին։

ՓԱՐԻԶ, 25 ապրիլի։ Երէկ Սենայի ափերը լուսաւորված էին գեղեցիկ կերպով։ ամբողջ ահագին բազմութիւն զբոսնում էր փողոցներում, ու զիշեր հրախաղութիւն կար. տոնախմբութիւնը աւարտվեց Էյֆելեան աշտարակի բնդաւանդները լուսաւորութեամբ, որ առաջ բերեց ընդհանուր զարմանք։ Յուցահանդիսի բացմանը ղեկավարողական մարմին համարեա բոլոր անդամները ներկայ էին. ներկայ էին միայն Ռուսաստանի և Աւստրո-Սլոնիացիների ներկայացուցիչները։ Կենտրոնական շինությունը հրաշալի տեսք ունէր. —աչքի է ընկնում համազգեստների և բոլոր ազգերի շորերի զանազանակերպությունը. ժողովուրդը իր հրճանքը արտայայտեց ցուցահանդիսի բաժինները շրջապալիս. մեքենաների բաժնում արձակում էին բարձր և ուրախ գոչումներ, ամենքն էլ զլխարկները վերցրին և սկսեցին թափահարել նրանց. երբ նախագահը սկսեց ղեկն ցուցահանդիսի օտարերկրեայ բաժինները, սկսելով ռուսականից, այն ժամանակ սկսեցին գոչել. «կեցցէ Ռուսաստանը, կեցցէ Կարնո»։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 26-ին ապրիլի։ Կոմս Տոյսոյ հիւանդացաւ դեռ անցեալ շաբաթին, սովորական չնշարժելովեամբ, որով նա հիւանդ էր արդէն մի քանի տարի շարունակ։ Երեկոյան սրտի ցաւի հետ յայտնվեց և կողքի ցաւը, այսպիսով պարզվեց, որ կոմսը հիւանդացել էր թոքերի բորբոքմամբ։ Արդէն ապրիլի 21-ին պրոֆէսոր Զախարին մասնացոյց արեց հիւանդի փոսնդուտը դրութեան վրա։ Ցաւերը հետզհետեւ աւելանում էին, թէ և 24-ին հիւանդը իրան աւելի լաւ զգաց։ Այնու ամենայնիւ նկատվում էր սրտի գործունէությունիւ նաւազելը։ Կոմսը մեռաւ սրտի մա-

րումից, պահպանելով իր մտարոր ամբողջ կարողությունը։ Երէկ, 8 1/2 ժամին երեկոյան, ներկայութեամբ մի քանի մինիստրների, սինդիկատ-պրոկուրորի և բարձրաստիճան այլ անձանց կատարվեց առաջին հոգեհանգիստը։

ԿԱՆՆ, 26 ապրիլի։ Մեծ Խխանուհի Մարիա Պաւլովնան ուղևորվեց Պետերբուրգ, իտալիայի վրայով։ Մինչև Միլան բաղադր Մեծ Խխանուհուն կուղեկցէ Մէկլենբուրգեան դուքսը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 25-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ —	93 ր. 50
Բերլինի վրա 100 մարկ —	45 > 72
Փարիզի վրա 100 ֆրանկ —	37 > —
Ռուսի — արծէ —	7 > 51
Մաքսային կուպոններ —	149 > 50
Արծաթ —	1 > 13
Բորսային դիվիդենդներ —	5 և 6 1/4%
Պետական բանկ. 5% տոմս 1-ին շրջանի —	99 > 87
— — — — — 2-րդ —	99 > 87
— — — — — 3-րդ —	99 > 62
— — — — — 4-րդ —	99 > 75
— — — — — 5-րդ —	99 > 75
— — — — — 6-րդ —	99 > 62
Նոր 4% —	85 > 37
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. —	100 > —
— — — — — 2-րդ —	100 > 50

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Դէյստովիտէնի ստատսիկ սօվետնիկ ՅՈՎԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՆԱՆՈՎԻ մահվան տարեկիցին, վաղը, ուրբաթ օր, ապրիլի 28-ին, առաւօտեան 10 ժամին, կը կատարվի պատարագ և հոգեհանգիստ Հայոց Կուսանաց Ս. Ստեփաննոս եկեղեցում։ Այդ մասին յայտնում են հանգուցեալի ազգականները և ծանօթները, ցանկանալով յարգել հանգուցեալի յիշատակը։ 1—1

Լ յ յ տ ե ս ա լ
Տ Ի Գ Օ
ՂԱԼԻ ԱԴԱԹՆԵՐԱՆ
պ ա տ կ ե Ր Ն Ե Ր
ՀԸՊԱՏՏՏ ԲՈԼԱՒ ԿՏԻ
(Շուշա-Ղալի բարբառով)
Գինն է 1 ր.
ձանապարհածախսով 1 ր. 20 Կ.
Փառակազմ 2 ր.
Դիմել «ԱՂԻԻԻ» վաճառանցը։
3—6

Թեմիս ՍՐԲԱՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ կարգադրութեամբ, ապրիլի 30-ին, կիրակի օրը ժամի 12-ին ա. պատարագից յետոյ որոշված է կատարել Թեֆլիսի Նորաշէն Սուրբ Աստուածածին եկեղեցու օրհորդական դպրոցի ՀՈԳԱՐԱՐՁՈՒՆԵՐԻ վերջնական ընտրութիւն։ Ուստի յիշեալ եկեղեցու մեծպատիւ ծխականները հրաւիրվում են նշանակեալ ժամին նոյն եկեղեցին՝ մասնակցելու ընտրութեանը։ Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների Թեֆլիսի՝ Յովհանէս քահանայ Մարտիրոսեան։ 1—2

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԵԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԵՍ
ՊՕԴՈԼԵԱՆ ԱՍԱՄՆԱԴԵԼ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՑՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍ.
ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան դեղա-
վաճառատան, և պ. պ. Տահ-
պարտեանցի, Մակկէրի, Սէնչի-
կովսկու և Ազմուրովի դեղա-
տներում։ ԲԱՊՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԲՈՒԹԱՑԻՍՈՒՄ Կօհօշկի մօտ, ՍՍԱՎՐՈՊՈԼԻՍ, Բրոսնօցկու մօտ և ԵԿԱՆԻՆՆՈՒՄԱՐՈՒՄ։
3—52 (Հ.)

ՄԱՐԻԱՍԵԱՆ-ՅՈՎԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ հոգաբարձական խորհրդարանում Ա-
ձՈՒՐԻՈՎ ՊԵՏԻ ՏՐՎԻ ԱՆԱՆԵԱՆ ԲԱՐԱՆՍԱՐԱՆ Երեք տարի ժամանակով առաջիկայ
մայիսի 15-ից։ Աճուրդին մասնակցել ցանկացողները հրաւիրվում են զալ Մարիամեան-
Յովհանեան ուսումնարանը, ներկայ ապրիլի 29-ին, շաբաթ, երեկոյան 7 ժամին։
3—3